

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2018Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի 2018 թ.-ի **առաջին** նիստը տեղի է ունեցել 23.03.2018 թ.-ին: Խորհրդի 24 անդամից նիստին մասնակցել է 13-ը, կա՝ 5 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

ՀՀ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող և նախատեսվելիք ծրագրեր՝ կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդման համատեքստում /զեկուցող՝ ՀՀ ԿԳՆ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության պետ՝ Արտակ Աղբալյան/:

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանության արժանացնել «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2018-2022 թվականների բարեփոխումների ծրագրի» նախագիծը:

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի 2018 թ.-ի **երկրորդ** նիստը տեղի է ունեցել 06.06.2018 թ.-ին: Խորհրդի 24 անդամից նիստին մասնակցել է 21-ը, կա՝ 5 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգով սահմանված՝ խորհրդի անդամների ռոտացիայի հարցի քննարկում և իրականացում:

Համաձայն հասարակական խորհրդի աշխատակարգի՝ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի: Արտահերթ նիստի ընթացքում իրականացված վիճակահանության արդյունքում ութ անդամ դուրս է մնացել խորհրդի կազմից: Խորհուրդն առաջարկել է նախագահին, առաջնորդվելով հասարակական խորհրդի աշխատակարգի 11-րդ կետով, խորհրդի կազմում կրկին ընդգրկել դուրս մնացած անդամներին: Բացի այդ, նշվել է, որ խորհրդի կազմում նոր անդամներ ընդգրկելու նպատակով նախարարությունը սահմանված ժամկետներում հայտարարել էլ մրցույթ: Ստացված հայտերի և այսօր իրականացված ռոտացիայի արդյունքում կձևավորվի ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նոր կազմ:

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի 2018 թ.-ի **երրորդ** նիստը տեղի է ունեցել 16.07.2018 թ.-ին: Խորհրդի 36 անդամից նիստին մասնակցել է 28-ը, ևս՝ 3 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նոր անդամների ներկայացում
 2. Կրթության ոլորտի հիմնախնդիրները և զարգացման միտումները
- Նիստի ընթացքում ներկայացվել են ռոտացիայի արդյունքում ձևավորված խորհրդի նոր անդամներին:

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի 2018 թ.-ի **չորրորդ** նիստը տեղի է ունեցել 14.11.2018 թ.-ին: Խորհրդի 36 անդամից նիստին մասնակցել է 26-ը, ևս՝ 3 13 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր համակարգ. կառավարման խորհուրդների ձևավորման, գործառույթների սահմանման և տնօրենների ընտրության կարգերի վերանայված մոտեցումների ներկայացում /զեկուցող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ Սյուզաննա Մակյան/:

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Խորհրդի անդամները մինչև ս/թ նոյեմբերի 24-ը պետք է ներկայացնեն գրավոր առաջարկություններ՝ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:
2. Բարձրացված խնդիրներն ընդունել ի գիտություն, առաջարկվող փոփոխությունները՝ որպես հիմք, և խորհրդի անդամների առաջարկությունների և հասարակական հարթակներում քննարկումների արդյունքում իրականացնել համապատասխան փոփոխություններ՝ դրանք ներառելով նորմատիվ իրավական ակտում: